

փոքրիկ ընդհատում մը ունենալով 1905-ի ուսական յեղափոխութեան ժամանակաշրջանին :

Այսպէս, հայոց ուսական օրինատացիալի խնդիրը երկար պատմութիւն մը ունի իր ետեւ Իսրայէլ Օրիի օրերէն սկսած մինչև այսօր : Այդ պատմութեան վերադնահատութիւնը չէ որ հոս պիտի ընենք : Պատմական իրողութիւններու շարանն իսկ բաւական է ցոյց տալու, որ հայոց ուսական օրինատացիան տեսական երեւոյթ մը եղած չէ, եւ պայմանաւորուած է այն շարժումներով, որոնք ուղղուած էին մեզ տիրապետող պետութիւններու եւ յատկապէս Թուրք-թաթարական տարրի դէմ :

\* \* \*

Հ. Յ. Դաշնակցութիւնն ու հայ ժողովուրդը, որ մինչև 1914-ի ամառը ակնյայտի հակառուս ընթացք ունէին, հակուեցան Ռուսաստանի կողմը անմիջապէս, երբ տեսան, թէ ուսական բանակները նորէն պիտի քայլէին դէպի Ալաշկերտ եւ Բասէն :

Որքան խորունկցնենք մեր բացատրութիւններն այս ընթացքին մասին, եւ որքան ալ քննադատական ակնոցով պարտենք զրգապատճառները, մէկ հիմնական կէտ պարզ կ'երևայ եւ կը մնայ հիմնական լծակը այդ ժամանակուան ուսական օրինատացիային եւ այդ այն խորունկ համոզումն է, որ Ռուսաստանի (մեզի բարեկամ թէ թշնամի, — միեւնոյնն է) արշաւանքը Թուրքին գերազանցապէս պիտի վնասէր :

Այս անուրանալի ճշմարտութիւնը միայն բաւական էր, որ հայերն ըլլային ուսերուն հետ :

Հայոց ուսական օրինատացիան 1914-էն մինչև 1916 թուականը գանգուածային էր եւ գործօն : 1916-ին (Ռուսաստանը զաղանի գաշնադրով, Թուրքիոյ բաժանումով, Տաճկահաստանի բաժնետէրը կը մնար եւ կը ծրարէր Ալաշկերտի հովիտը բացել կողակներով) որոշ տատանում եւ սպասողական վիճակ կը տիրէր, երբ 1917-ի փետրուարի վերջը պայթեցաւ ուսական յեղափոխութիւնը :

Հ. Յ. Դաշնակցութիւնն ու հայ ժողովուրդը, նորէն գործօն կերպով հակուեցան ուսական ղեկավարատիկ պետութեան կողմը, սնուցանելով այն յոյսը, թէ ուս յեղափոխա-

կան բանակը պիտի պատուար կանգնէր Թուրքիոյ դէմ Երզնկայի, Մուշի եւ Պիթլիսի մէջ, եւ թէ հայ ժողովուրդը ազգերու ինքնորոշման իրաւունքով, հայրենիքի մոխիրներու վրայ իր նոր վերածնունդը պիտի դարձնէր :

Յեղափոխական Ռուսաստանի ներկայութիւնը զգալի էր եւ համապատասխան մեր քաղաքական եւ ազգահաւաքման նպատակներուն : Հայ աշխատաւորութիւնն այդ կողմ կը թեքուէր, առանց դաւաճանելու իր դասակարգային եւ ազգային բնազդին եւ զիտակցութեան :

II

Բուլշևիկեան յեղափոխութիւնը զահալէ-ժի մը մէջ կը նետէր ամբողջ Ռուսաստանը եւ անոր հետ կապուած փոքրիկ երկիրները : Իւրաքանչիւր ազգային հաւաքականութիւն դիրք կը բռնէր՝ համաձայն իր երկրի եւ ժողովուրդի շահերուն : Սակայն, հայերս տակաւին կառչած կը մնայինք Ռուսաստանի ուժին, թէ եւ ան արդէն բուլշևիկեան էր :

Հայոց այս ընթացքը միայն բնազդական շարունակութիւն մը չէր այն հակումին, որ մենք ունէինք բուլշևիկեան իշխանութիւնը նախորդող վարչաձեւի հանդէպ : Ռուսաստանը թէ եւ կարմիր, բայց զօրաբանակներ ունէր Տաճկաստանի եւ Կովկասի մէջ, — ուժ մը, զոր մենք տակաւին կը յամառէինք նկատել բարիք մը հանդէպ թրքական շարիքին : Բայց դէպքերը արագ ընթացք ստին եւ բուլշևիկեան Ռուսաստանը հասցուցին 1918-ին, փետրուարին, Բրեստ-Լիտովսքին : Այդ օրերուն, ուսական գործի վերջապահներն իսկ Հիւսիսային Կովկաս հասած էին :

Հայ բուլշևիկները 1917-ի նոյեմբերի խառնակութեան օրերուն իսկ ջուրի երես ելնել ուզեցին եւ ընդգրկեցին բուլշևիկեան Ռուսաստանի օրինատացիան՝ հայկական հարցը լուծելու համար\*):

\*) Տէրեան եւ Լուկաշին խորհրդակցելով Ստալինի հետ, Ժողովրդական Գործադարնէրու Խորհրդին ներկայացուցին զեկուցագիր մը «Տաճկահաստանի մասին» :

Այդ գեկուցագիրը պարզելով հայ ժողովուրդի անցելալը, պայքարները, կոտորածը եւ գիւնանադիտութեան խարերայութիւնները եւ